ՇԱՎԱՐՇ ԱԶԱՏՅԱՆ[*]
գիտաշխատող
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
shavarsh.azatyan@gmail.com

ՀԻԶՏԲՈՒԶԻՏԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բանալի բառեր՝ *Սրբախոսություն, Սասանյան Իրան, Մարզպանական Հայաստան, համարկար, զրադաշտականություն, օտարազգի սրբեր, Դվին:*

Ներածություն

Սրբախոսությունը եղել է վաղմիջնադարյան հայ գրականության կարևոր ոլորտներից մեկը և մեծ դեր է խաղացել քրիստոնեության տարածման և ամրապնդման գործում: Ունենալով գաղափարական ու դավանաբանական ուղղվածություն, ինչպես նաև շարունակելով անտիկ շրջանի գրական ավանդույթները[1]՝ սրբախոսական երկերը պարունակել են պատմագիտական տեղեկություններ, որոնք վերաբերել են տվյալ ժամանակաշրջանի քաղաքական, հասարակական, տնտեսական, մշակութային, կրոնական կյանքին[2]:

Ի տարբերություն Արևմտյան Եվրոպայում լատիներենով ստեղծված վկայաբանությունների, որոնք լի էին չափազանցված ու երևակայական դրվագներով[3], հայ սրբախոսական երկերը աչքի են ընկնում իրենց պատմականությամբ և տվյալ ժամանակի մասին բազմաբնույթ տեղեկատվությամբ: Հայկական վարքերն ու վկայաբանությունները ստեղծվել են սրբերի մահվանից կարճ ժամանակ անց և, բնականաբար, լիովին կրել են այդ ժամանակաշրջանի կնիքը:

Վաղմիջնադարյան Հայաստանում, հատկապես Սասանյան Իրանի և Արաբական խալիֆայության տիրապետության շրջանում, հայ սրբախոսական գրականության մեջ սկսեցին ի հայտ գալ վկայաբանություններ, որոնք նվիրված էին օտարազգի հավատացյալների՝ գլխավորապես պարսիկների ու

---

[*] *Հոդվածը ներկայացվել է 03.09.19, գրախոսվել է 15.11.19, ընդունվել է տպագրության 05.12.19:*

[1] **Бибиков** 1996, 41–42.

[2] **Տեր-Դավթյան** 2011, 25:

[3] **Brown** 1982, 19; **Staat** 2018, 209–224.

արաբների (Հիզտբուզիտ, Դավիթ Դվնեցի, Գրիգոր Մանաճիհր Ռաժիկ և այլն), որոնք ոգեշնչելու էին ժամանակակիցներին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ VI դ. չեն պահպանվել պատմագրական երկեր, Հիզտբուզիտի վկայաբանությունը կարևոր արժեք է ձեռք բերում և կարող է հաղորդել եզակի տեղեկություններ՝ այդ ժամանակաշրջանի հայ-իրանական հարաբերությունների, Սասանյան Իրանի և Մարզպանական Հայաստանի վարչական, հարկային, քաղաքական համակարգերի մասին: Որպես սրբախոսական հուշարձան, վկայաբանությունը առաջնային նշանակություն ունի հայոց եկեղեցու դավանաբանական ուղղվածության, այլադավանների դեմ մղած պայքարի պատմության, ինչպես նաև Սասանյան Իրանի դատաիրավական համակարգն ուսումնասիրելու տեսանկյունից:

Հիզտբուզիտի վկայաբանությունը նվիրված է ազգությամբ պարսիկ, զրադաշտական մոգ Մախոշ-Հիզտբուզիտին: Վերջինս գալով Հայաստան՝ ընդունել էր քրիստոնեություն, ինչի հետևանքով հետագայում մահապատժի էր ենթարկվել: Հիզտբուզիտի վկայաբանությունից հայտնի են նրա ծննդավայրը, ընտանիքը. «*Յորում ժամանակի (Խոսրով Անուշիրվանի – **Շ.Ա.**) այր ոմն Մախոշ մոգ՝ ի նորին աշխարհէ, ի գաւառէն, որ կոչի **Բերշապուհ**, ի գեղջէ, որոյ անուն **Քունարասպան**, որոյ **ծնողքն պաշտաւնեայք էին կրակի**, եւ ինքն ի մանկութենէ մոգութեամբ վարժեալ. Եւ էր զաւրաւոր խրատու եւ գիտութեամբ հրապաշտիցն եւ խորհրդով իմաստուն*»[4]:

Այստեղ նշված Բերշապուհ կամ Բեշապուհ[5] քաղաքը, հավանաբար, Պարսք երկրում գտնվող համանուն գավառի կենտրոնն է եղել[6]:

Հետագայում Մախոշը պարսից բանակատեղիում ականատես է եղել Գրիգորիս անունով վկայի նահատակությանը և համակրանքով լցվել քրիստոնեության նկատմամբ. «*Սա ի դիպուածոյ իմեքէ ի բանակս թագաւորին հասանէր, եւ պատահէր չարչարանաց սուրբ վկայի ուրումն՝ որում անուն էր Գրիգորիոս: Հրաշացեալ ընդ համարձակութիւն նահատակին, եւ զհաւատոց բարուք նախանձն նախանձեալ՝ ասէ՝ ի սրտի իւրում. Տէր Աստուած քրիստոնէից, նայեաց յիս եւ ցոյց ինձ ճանապարհ, որով գնացից, եւ բաց ինձ դուռն ողորմութեան ընդ նահատակի քում, զի արժանի եղեց արքայութեան քում, որ Տէրդ ես երկնի եւ երկրի*»[7]:

---

[4] **Ներսէս Ռաժիկ** 2004, 461:
[5] **Յովհաննէս Դրասխանակերտցի** 2010, 396:
[6] **Дашков** 2008, 337.
[7] **Ներսէս Ռաժիկ** 2004, 461:

Այս Գրիգորիս նահատակը Գրիգոր Մանաճիհր Ռաժիկն է՝ իրանական նշանավոր Միհրան տոհմից[8]: Վերջինիս նվիրված վկայաբանությունը տվյալներ չի հաղորդել նրա նահատակության վայրի մասին. «*Յայնժամ հրամայեաց մոգպետն մոգուցն հաւապարմաց տանել զսուրբն Գրիգոր ի զատական տեղի մի և սրով սպանանել*»[9]: Հիզտբուզիտի վկայաբանության համաձայն՝ Գրիգորիսը նահատակվել է պարսկական բանակատեղիներից մեկում, որն ընկած է եղել Հիզտբուզիտի ճանապարհին՝ Բերշապուհից դեպի Սյունիք և Դվին: Ինչպես հայտնի է, Սասանյան Իրանի Հյուսիսային քուստակում բանակատեղիները գտնվել են Փայտակարան քաղաքի մոտակայքում և Մուղանի դաշտում[10], ուստի կարող ենք ենթադրել, որ Գրիգորի նահատակությունը տեղի է ունեցել այս երկու վայրերից մեկում:

Հիզտբուզիտը երկար չի մնացել Սյունիքում, բայց հասցրել է այստեղ ծանոթանալ քրիստոնեական որոշ գրքերի և հետո միայն ուղևորվել Դվին. «*Գայր անտի **յաշխարհն Սիւնեաց**, պարապելով յունկնդրութիւն Գրոց Սրբոց, եւ լեալ անդ սակաւ ամիսս հասանէ ի **Հայս**. եւ **յԱյրարատ գաւառ**՝ բնակէր յոստանին հայոց ի Դուին*»[11]:

Գալով Դվին՝ Հիզտբուզիտը ծառայության է անցել պարսից **մոգերի առաջնորդ** և **համարկար** Խոսրով Պերոզի պալատում. «*բնակէր (Հիզտբուզիտը – **Շ.Ա.**) յոստանին Հայոց ի Դուին, յարեալ ի մոգս ուրումն **Հայոց համակարի**, որում անուն էր **Խոսրով Պերոզ**. Եւ արհամարանաք զմոգութիւնն անցուցանէր*»[12]:

Նախ փորձենք պարզել, թե Հիզտբուզիտն ինչ լիազորություններ է ունեցել համարկարի պալատում: Պետք է նշել, որ զրադաշտական կրոնի սպասավորները Խոսրով Անուշիրվանի կողմից մեծ աջակցություն են ստացել[13] և նպաստել են պարսից տերության տարածքում նրա դիրքերի ամրապնդմանը[14]: Մոգերը անցկացրել են դատավարություններ, զբաղվել են հոգևոր ծառայությամբ, քարոզչությամբ և այլն[15]: Նրանց զգալի մասը տաճարական սպասավորներ

---

[8] **Տեր-Մկրտչյան** 1998, 153–165:
[9] **Տեր-Մկրտչյան** 1998, 165:
[10] **Հարությունյան** 1981, 68:
[11] **Ներսէս Ռաժիկ** 2004, 461:
[12] **Ներսէս Ռաժիկ** 2004, 461:
[13] **Boyce** 1979, 133.
[14] **Мишин** 2014, 110.
[15] **Мишин** 2014, 108–110.

էին (**խիրբեդներ**), որոնց գործը հիմնականում հոգևոր ծառայությունն էր[16]: Ամենայն հավանականությամբ, Մախոշ-Հիզտբուզիտը նույնպես համալրել է վերջիններիս շարքերը:

Զրադաշտական տոներից մեկի ժամանակ հրդեհ է բռնկվել համարկարի պալատում, որից հետո Մախոշը բացահայտ հրաժարվել է մոգությունից և հայտարարել իր՝ քրիստոնեության հետևորդ լինելու մասին. «*Եւ լինէր ի ձմերային ժամանակի, ի մեհեկանին, ըստ պարսկաց ամսոյ սկիզբն, եւ ըստ սովորութեանն իւրեանց զոհս աղտեղ մատուցանէին հրոյն յապարանս համակարին: Եւ երանելին Մախոշ կայր ընդ նոսա յառակի, պնդեալ զբերանն: Եւ բարձրացեալ բոցն ի ճարպոյն, հասանէր ի դարաւանդակ տանն եւ բորբոքէր: Իսկ մոգուցն ժողովեալ զզոհելն՝ զհուրն փութացան շիջուցանել, եւ ոչ կարացին. Եւ արտաքս ընթացեալ պատմէին զիրսն:*

Ասէ երանէլին. Ես ի բազում ժամանակաց հաւատացի քրիստոնէից, եւ խղճիւ մոգ էի, բայց արդ յայտնապէս քարոզեմ զհաւատս, որ ի Քրիստոս, եւ այլ ոչ եւս սպասաւորեցից հրոյ՝ զայդ ամենայն զարմանալիս տեսեալ»[17]:

Վերոնշյալ մեջբերումից տեսնում ենք, որ տոնակատարությունը տեղի է ունեցել ձմռանը՝ մեհեկան ամսի սկզբին: Մեհեկանը[18] հասարակ տարիներին համընկել է փետրվար-մարտ ամիսներին[19]: Այս ամսին պարսիկները մեծ շուքով նշել են Միհր աստծուն նվիրված տոնը[20] և զոհաբերություններ արել նրա պատվին[21]: Չի բացառվում, որ վկայաբանության մեջ նկարագրվող տոնը նվիրված է եղել հենց այդ աստծուն:

Սասանյան վարչակարգը Հայաստանում ըստ Հիզտբուզիտի վկայաբանության տվյալների

Վկայաբանությունը հարուստ տեղեկություններ է ավանդում Խոսրով Պերոզ անունով «**Հայոց համա(ր)կար**»[22] կոչվող պաշտոնյայի մասին: Տեսնում ենք, որ վերջինս կառավարել է Դվինում և եղել մոգերի գլխավորը: Տվյալներ

---

[16] **Мишин** 2014, 108–110.

[17] **Ներսէս Ռաժիկ** 2004, 461:

[18] Համաձայն սկզբնաղբյուրների՝ Միհր-Միհրական անունն է կրել զրադաշտական օրացույցի յոթերորդ ամիսը, ինչպես նաև ամսվա տասնվեցերորդ օրը (**Բադալյան** 1970, 151–152, **Boyce** 1979, 71–72):

[19] **Բադալյան** 1970, 98:

[20] **Բադալյան** 1970, 98:

[21] **Boyce** 1979, 34.

[22] Վկայաբանության մեջ այս բառը օգտագործվել է «համակար» ձևով, որը ըստ Հ. Աճառյանի սխալ է, և ճիշտ տարբերակն է համարկարը (տե՛ս **Աճառյան** 1977, 23):

կան նաև նրա ընտանիքի մասին: Նշվում է, որ Խոսրով Պերոզի կինը նույնպես ունեցել է համակրանք դեպի քրիստոնեությունը. «*Եւ տեսեալ կնոջ համակարին՝ մեծ գոհութիւն առաքէ սպասաւորաց սքանչելագործ սուրբ խաչին*»[23]: Պետք է ենթադրել, որ այս համարկարի պալատը V դ. երկրորդ կեսին Դվինում շինված կաթողիկոսական պալատն է եղել[24], որին կից հետագայում պարսիկները կառուցել են զրադաշտական գլխավոր ատրուշանը[25]: Պեղումները ցույց են տվել, որ այս ապարանքն ու ատրուշանը իսկապես ավերվել են հրդեհի պատճառով: Չնայած հնագետները կարծում են, որ մեհյանը կառուցվել է Սուրեն մարզպանի օրոք՝ մոտ 550–560-ական թթ.[26], սակայն վկայաբանության տվյալներից կարող ենք եզրակացնել, որ այդ կառույցները համարկարին են պատկանել առավել վաղ՝ VI դ. 40-ական թթ.: Ենթադրում ենք, որ Սուրեն մարզպանը վերակառուցել է վերոնշյալ շինությունները վկայաբանության մեջ հիշատակված հրդեհից հետո:

Առավել կարևոր են այն տվյալները, որոնք բնութագրում են **համարկար** կոչվող պաշտոնը: Համարկարները կարևոր տեղ են զբաղեցրել իրանական կայսրության վարչական համակարգում: Նախ և առաջ, նրանք տնտեսական կամ ֆինանսական գործառույթներ իրականացնող պաշտոնյաներ էին[27]՝ իրավասու կարգավորելու գները, կառավարելու եկամուտներն ու ծախսերը: Նրանք էին իրականացնում հարկերի հավաքումը[28]: Կարելի է կարծել, որ այս պաշտոնը հատուկ նշանակություն է ունեցել և շնորհվել է գահին առավել հավատարիմ անձանց:

Սկզբնական շրջանում համարկարները մարզերում համալրել են հազարապետի վարչակազմը[29]: Բայց հետագայում, ինչպես տեսնում ենք վկայաբանության տվյալներից, նրանց լիազորությունները ավելացել են հենց ի հաշիվ հազարապետի: Նրանց իշխանությունը տարածվել է նաև հարևան մարզերում: Այս մասին վկայում են նաև Խոսրով Անուշիրվան արքայի կառավարման շրջանում ստեղծված պաշտոնեական կնիքները[30]:

---

[23] **Ներսէս Ռաժիկ** 2004, 461:
[24] **Քալանթարյան, Ղաֆադարյան** 1990, 147:
[25] **Քալանթարյան, Ղաֆադարյան** 1990, 147:
[26] **Քալանթարյան** 1982, 93:
[27] **Daryaee** 2009, 132–133: **Խրշուդյան** 2015, 163–174.
[28] **Периханян** 1973, 389–391.
[29] **Խրշուդյան** 2003, 101.
[30] **Խրշուդյան** 2003, 226.

Դվինի համարկարի դերի մեծացման մասին անուղղակի փաստել է նաև Կիրակոս Գանձակեցին, որը Հիզտբուզիտի նահատակության մասին խոսելիս համարկարին անվանել է «*վերակացու աշխարհիս*»[31]: Ամենայն հավանականությամբ, պատմիչը նման եզրակացության հանգել է հենց վկայաբանության տվյալները վերլուծելու արդյունքում, քանի որ իրենից առաջ եղած պատմագիրները գրեթե չեն կարևորել համարկարի պաշտոնը:

Ըստ վկայաբանության՝ Դվինում հաստատված համարկարը, բացի տնտեսական և ֆինանսական հարցերով զբաղվելուց, ունեցել է նաև հոգևոր գործառույթներ: Հետևաբար Խոսրով արքան, համարկար Խոսրով Պերոզին հանձնելով տնտեսական ու կրոնական պաշտոնները, մեծացրել է նրա լիազորությունների շրջանակը, ինչը բխել է տերությունն առավել կենտրոնաձիգ դարձնելու նպատակադրումից:

Կարող ենք ենթադրել, որ կրոնական ու հարկային գործառույթներ ունեցող համարկարը իրականացրել է հարկային հատուկ քաղաքականություն, որի հիմքում եղել է այլակրոններից ավելի մեծ քանակությամբ հարկերի գանձումը: Ծանր հարկերից ազատվելու համար քրիստոնյաները և այլ կրոնների հետևորդները ստիպված ընդունելու էին զրադաշտականություն, ինչը և ցանկացել է իրականացնել Սասանյան վարչակարգը: Այսպիսով, կարող ենք ասել, որ Խոսրովը կրոնական հարցերում կիրառել է «փափուկ ուժի» քաղաքականություն՝ ցանկանալով ավելացնել կամավոր զրադաշտականություն ընդունողների թիվը:

Հաջորդ պաշտոնյան **Հայոց հազարապետն** է, որի մասին հիշատակվել է հրդեհը հանգցնելու տեսարանում. «*Եւ որ **հազարապետն էր Հայոց**, իբրեւ լուաւ զձայն ամբոխին, փութապէս հասանէր ի դուռն եկեղեցւոյն, ստիպէր զպաշտաւնեայսն առնուլ զսուրբ խաչն եւ բերել յապարանսն*»[32]:

Խոսրով I-ի օրոք հազարապետը կորցրել էր նախկին դիրքը և իրականացնում էր միայն զինվորական հրամանատարի գործառույթներ[33]: Վկայաբանության տվյալներից կարող ենք ենթադրել, որ հազարապետը լոկ հրահանգիչ-զինվորական է: Նրա լիազորությունների մեծ մասը, ամենայն հավանականությամբ, փոխանցվել էր համարկարին: Վկայաբանության մեջ նշվող հազարապետը հայազգի չի եղել, քանզի նրա մասին հիշատակություն չկա նույն ժամանակ հրավիրված Դվինի Բ ժողովի մասնակից հայ նախարարների

[31] **Կիրակոս Գանձակեցի** 1961, 41:
[32] **Ներսէս Ռաժիկ** 2004, 461:
[33] **Хуршудян** 2003, 113.

շարքում: Սակայն, չի կարելի բացառել, որ նա քրիստոնեության համակիր է եղել: Այս մասին ակնարկվում է նաև վկայաբայության մեջ. «*զի թերեւս մերժեսցի (հազարապետը – **Շ.Ա.**) հուրն, որ առ նեղութեանն ակամա հաւատայր*»[34]:

Զոհաբերության ժամանակ Հիզտբուզիտի քրիստոնեությունը բացահայտ ընդունելուց հետո նրան հանձնել են «**Հայոց իշխան**» Նիխորականի դատին, որի հորդորներից ու սպառնալիքներից հետո էլ վկան չի վախեցել և անդրդվելի է մնացել, ուստի և. «*զայրացեալ իշխանն՝ հրամայեաց հարկանել զերանելին երկոտասան կրկին, եւ գրեալ զհարցումն՝ կապէր զոտս եւ զձեռս եւ տայր ի բանտ*»[35]:

Հետագայում վկային հարցաքննել և խոշտանգել են Նախապետ ու Քնարիկ անուններով «Հայոց իշխան»-ները. «*Յետ սակաւ ժամանակի փոխանորդէ զկնի Նիխորականին Նախապետն անուանեալ. եւ նստեալ յատենի ածին զերանելին Մախոշ առաջի նորա:*

*Եւ ի լնուլ այլ եւս **երից ամացն**՝ յաջորդէր զՆախապետն որում Քնարիկն ասէին*»[36]:

Նախ խոսենք վկայաբանության մեջ հիշվող «Հայոց իշխան» եզրույթի մասին: Վերջինիս մասին վկայություն կա դեռևս V դ. կազմված «Գահնամակ»-ում. «*Առաջին իշխանն Հայոց եւ Մաղխազն*»[37]: Այս պաշտոնը առավելապես ամրապնդվել է V–VI դդ. Հայաստանի բյուզանդական հատվածում, իսկ արաբական արշավանքների շրջանում ձեռք է բերել նաև նոր բովանդակություն՝ ստանալով նաև «պատրիկ» անվանումը[38]: Սկսած Թեոդորոս Ռշտունուց՝ Հայոց իշխանը արմատապես տարբերվել է բյուզանդական Հայաստանի նույնանուն կառավարիչներից: Ի տարբերություն վերջիններիս, որոնց իշխանությունը սահմանափակ էր, արաբական շրջանի Հայոց իշխանները ունեցել են գործառույթների ավելի լայն շրջանակ[39]:

Ակնհայտ է, որ վկայաբանության մեջ շփոթ կա և «մարզպան»-ի փոխարեն կիրառվել է **«Հայոց իշխան»** տերմինը: Հավանաբար, նման թյուրիմացություն առաջացել է այն պատճառով, որ վկայաբանությունը խմբագրվել է արաբական տիրապետության շրջանում, երբ նախկին Սասանյան տերության

---

[34] **Ներսէս Ռաժիկ** 2004,461:
[35] **Ներսէս Ռաժիկ** 2004, 462:
[36] **Ներսէս Ռաժիկ** 2004, 462:
[37] **Յակոբեան** 2011, 532:
[38] **Տեր-Ղևոնդյան** 2003, 192–194:
[39] **Տեր-Ղևոնդյան** 2003, 193–194:

մարզպանի լիազորությունները զգալի չափով փոխանցվել էին «Հայոց իշխան» կոչվող պաշտոնյային[40]:

Վկայաբանության վրացերեն թարգմանության մեջ նույնպես կիրառվել է «[Հայոց] իշխան» տերմինը՝ "*ერისთავი*„[41]: Անվանածների նման զանազանությունը լավագույնս դրսևորվել է Դավիթ Դվնեցու վկայաբանության մեջ, երբ Գրիգոր Մամիկոնյանը միաժամանակ կոչվել է և՛ «իշխան Հայոց», և՛ «պատրիկ», և՛ «մարդպետ կամ մարզպետ». «*Եւ եղեւ այս ի ժամանակս Անաստասայ Հայոց կաթողիկոսի և յիշխանութեան մեծանուն Գրիգորի Մամիկոնենի Հայոց* ***պատրկի***», «*...առեալ Գրիգորի* ***Հայոց [իշխանի]*** *մատուցանէր առ կաթողիկոսն Անաստաս*», «*յինքն հայցեաց Մուշեղ սպարապետն՝ որդի Մամիկոնենի և* ***[մարդ[զ]պետի]*** *(իմա՝ Գրիգոր Մամիկոնյանի –* ***Շ.Ա.****)*»[42]:

Հատուկ ուշադրության է արժանի նաև մարզպանների՝ **երեք տարով** պաշտոնավարելու փաստը: Այս մասին կարևոր տեղեկություն է հաղորդել նաև վրաց սրբախոսությունից հայտնի Եվստաթիոսի վկայաբանությունը, որտեղ նույնպես ակնարկվել է մարզպանների եռամյա կառավարման մասին. «***երեք տարի հետո,*** *որպես Քարթլիի մարզպան եկավ Վեժան Բուզմիրը*»[43]: Երկու վկայաբանությունների տեղեկությունները մեզ որոշ հիմք են տալիս ենթադրելու, որ մարզպանների կառավարման ժամանակը Խոսրով Անուշիրվանի օրոք սահմանվել էր երեք տարի: Կարող ենք կարծել, որ պարսից արքան նման քաղաքականությամբ ցանկացել է կանխել մարզպանների հզորացումը և տեղերում իշխանության ամրապնդումը: Ցավոք, վկայաբանությունների այս ուշագրավ տեղեկությունները չեն արձանագրվել պատմագրական երկերում, ուստի ստիպված ենք մնալ ենթադրության ոլորտում:

Պետք է ասել, որ Հիզտբուզիտի վկայաբանությունը բացառիկ հնարավորություն է ընձեռում Նիխորական, Նախապետ, Քնարիկ և Հովհաննես Դրասխանակերտցու հիշատակած Վահրամ Վշնասպ անունով մարզպանի[44] կառավարման տարեթվերը պարզելու համար: Այս խնդիրը լուծելու համար կարևոր է Հիզտբուզիտի նահատակության տարեթվի ճշգրտումը: Մի շարք աղբյուրներ ավանդել են, որ այդ իրադարձությունը տեղի է ունեցել Դվինի Բ ժողովի տարում:

---

[40] **Տեր-Ղևոնդյան** 2003, 26–27: **Vacca** 2013, 116–118:
[41] აბულაძე 1944, 117.
[42] აბულაძე 1944, 125, 132.
[43] წმ. ევსტათის მარტვილობა 2008, 250.
[44] **Յովհաննէս Դրասխանակերտցի** 2010, 396:

Առավել վաղ ստեղծված “Narratio de rebus Armeniae” (VIII դ.) երկում հստակ նշվել է, որ Դվինի Բ եկեղեցական ժողովը և Հիզտբուզիտի նահատակությունը տեղի են ունեցել միևնույն տարում[45]:

Վերոնշյալ քաղկեդոնական երկի տվյալները որոշ անճշտություններով կրկնել է վրաց կաթողիկոս պատմագիր Արսեն Սափարացին (IX դ.): Հավանական է՝ վերջինս նույնպես օգտվել է վերոնշյալ հայկական աղբյուրից[46]. «*Հրամայեցին երկրորդ մեծ ժողով գումարել նույն Դվինում նույն Ներսեսի [կաթողիկոսության] երկրորդ տարին. Հուստինիանոս թագավորի տասնչորսերորդ տարին, Խոսրով պարսից թագավորի երկրորդ տարին, երբ* ***վկայեց Հիզտիբուզիտը***»[47]:

Հիզտբուզիտի նահատակությունը և Դվինի Բ ժողովը համաժամանակյա իրադարձություններ է ներկայացրել նաև Ստեփանոս Տարոնեցին (X–XI դդ.). «*Սա (Ներսես Բագրևանդացին – **Շ.Ա.**) ի չորրորդ ամի հայրապետութեան իւրոյ եւ ի տասներորդ ամի իշխանութեան Մեժէժայ արար ժողով ի քաղաքն Դուին: Եւ էին գլխաւորք ժողովոյն Պետրոս եպիսկոպոս քերթող Սիւնեաց եւ Ներշապուհ ի Տարաւնոյ. Եւ կարգեցին զթուականն Հայոց ի ԺԴ-ն Յուստիանոսի կայսեր, որ զսուրբն Սոփիա շինեաց, եւ ի ԺԴ-ն Խոսրովայ որդւոյ Կաւատայ Պարսից արքայի: Յորում ամի սուրբն Յիզիտբուզիտ կատարեցաւ ի Քրիստոս*»[48]: Այս պատմագիրը նույնպես չի հայտնել, թե ինչ երկից է քաղել այս տեղեկությունները:

Մեկ այլ՝ «Գիր մերոյ հարցն որ ի Դուին ժողովեալ յաւուրս Մեծին Ներսիսի Հայոց Մեծաց եւ վասն Քաղկեդոնի» խորագիրը կրող երկում, որի հեղինակն ու գրության ժամանակն անհայտ են, նույնպես հաղորդել է, որ Հիզտբուզիտը նահատակվել է վերոնշյալ տարում. «*Իսկ ի ժամանակս Ներսիսի Հայոց կաթուղիկոսի, եւ Պետրոսի Սիւնեաց քերթողի եւ եպիսկոպոսի, եւ այլոց եպիսկոպոսաց Հայոց հրամայեցին ժողով մեծ լինել ի Դըւնին: Այս ի չոր(ր)որդ ամի Ներսիսի կաթուղիկոսութեան եղեւ [ի քսան] եւ չորք Խոսրովու արքայի եւ ի տասն եւ չորք Յուստիանոսի կայսեր եւ կատարմանն ի Քրիստոս սուրբն Յիզտբու[զ]իտ*»[49]:

Վերոբերյալ հիշատակությունները, ըստ երևույթին, բխել են միևնույն աղբյուրից, որից կարողացել են օգտվել թե՛ քաղկեդոնական, թե՛ ոչ քաղկեդոնա-

---

[45] **Բարթիկյան** 2002, 104:
[46] **Ակինեան** 1910, 289–290: **Բարթիկյան** 2002, 98:
[47] **Մելիքսեթ-Բեկ** 2013, 40:
[48] **Ստեփանոս Տարաւնեցի** 2010, 690–691:
[49] **Անանեան** 1957, 113:

կան հեղինակները[50]: Կարևոր է այն հանգամանքը, որ բոլոր այս տվյալները հավաստում են, որ Հիզտբուզիտի նահատակությունը տեղի է ունեցել Դվինի Բ ժողովի տարում: Այսինքն, Հիզտբուզիտի նահատակության տարեթիվը ճշտելու համար, վկայաբանության տվյալներից զատ, պետք է իմանալ նաև Դվինի Բ ժողովի տարեթիվը:

Հայոց եկեղեցու համար մեծ կարևորություն ունեցած այս ժողովը քննարկել է տարբեր հարցեր և, ամենայն հավանականությամբ, տևել է 553–555 թթ.[51]:

Ըստ վկայաբանության՝ Հիզտբուզիտը նահատակվել է Խոսրով Անուշիրվանի կառավարման 23-րդ տարում. «*Եւ այսպէս քաջութեամբ վկայեաց սուրբն Յիզտիբուզիտ ի* ***քսաներորդի երրորդի*** *ամին Խոսրովու թագաւորի, որ աւր երկու էր քաղոց ամսոյ, յաւուր կիւրակէի յերրորդ ժամու*»[52]: Ըստ տոմարական հաշվարկների[53]՝ քաղոց ամսի 2-ը, որը կիրակի է եղել, համապատասխանել է 553 թ. նոյեմբերի 9-ին[54], ինչը ցույց է տալիս, որ իսկապես Հիզտբուզիտի նահատակությունը տեղի է ունեցել ժողովի տարում: Ամենայն հավանականությամբ, Դվինի Բ ժողովի քննարկումները ծավալվել են 553 թ. նոյեմբերի 9-ից հետո՝ մինչև 555 թ. մարտի 21-ն ընկած ժամանակահատվածում:

Այսպիսով, Հիզտբուզիտի նահատակության թվականը պարզելուց հետո կարող ենք ճշտել նաև վկայաբանության մեջ հիշված մարզպանների կառավարման տարեթվերը: Այսպիսով, 548 թ. Նիխորականը եղել է մարզպան, Նախապետն ու Քնարիկը միասին կառավարել են 6 տարի, իսկ Հիզտբուզիտի նահատակությունը տեղի է ունեցել 553 թ., երբ Հայաստանում մարզպան էր Վահրամը: Այսինքն, 548–553 թթ. ընթացքում կառավարել են պարսիկ չորս մարզպաններ: Եթե նրանցից յուրաքանչյուրը կառավարել է երեք տարի, ապա կստացվի հետևյալ պատկերը. Հիզտբուզիտը ձերբակալվել է Նիխորականի կառավարման վերջին տարում՝ 548 թ., այնուհետև՝ 548–553 թթ.՝ Նախապետ և Քնարիկ մարզպանների օրոք, փակված է եղել Դվինի բանտում: Նահատակությունը, ամենայն հավանականությամբ, տեղի է ունեցել Վահրամ Վշնասպի կառավարման առաջին տարում՝ 553 թ.: Հետևաբար՝ Նիխորականը, Նախապետն ու Քնարիկը միասին կառավարել են մոտ 546–553 թթ.:

---

[50] **Անանեան** 1992, 29:
[51] **Անանեան** 1991, 87–88:
[52] **Ներսէս Ռաժիկ** 2004, 464:
[53] **Բադալյան** 1976, 106–109:
[54] **Անանեան** 1991, 87:

Սակայն տարակուսանք է առաջանում, թե ինչպես է, որ Դվինի Բ ժողովի նման կարևոր իրադարձությունը արձագանք չի գտել վկայաբանության մեջ, եթե իսկապես տեղի են ունեցել միևնույն տարում: Նման «բացթողումը» կարելի է բացատրել նրանով, որ Հիզտբուզիտի նահատակության ժամանակ ժողովը դեռևս չէր սկսվել, հետևաբար վկայաբանը չի գրել դրանց մասին:

Այնուամենայնիվ, վկայաբանության էջերում կարելի է գտնել անուղղակի տեղեկություններ Դվինի Բ ժողովի մասին: Նման վկայություններից կարելի է համարել, Խոսրով արքայի պատվիրակների ժամանման փաստը Հայաստան. «*Յայնմ ժամանակի լուեալ թագաւորն զբազում բռնութիւն եւ զպառապանս զոր հասուցանէին աշխարհին Հայոց գործակալքն, առաքէր երիս իշխանս հաւատարիմս այց առնել երկրին, անուն միումն Նատոյ՝ որ կոչի Դրովանդական, եւ երկրորդին Պերոզ, որ էր Ռեոյ գաւառին մոգպետ, եւ երրորդին Խոյապ, որ էր սպասաւոր արքային*»[55]:

Քաղաքական հարցերն, ամենայն հավանականությամբ, քննելու էր Խոյապը, իսկ Ռէ գավառի մոգպետ Պերոզը անցկացնելու էր դատավարությունը:

Ցավոք, այլ փաստեր չկան Նատո Դրովանդական պաշտոնյայի մասին: Կարող ենք միայն ենթադրել, որ նա ինչ-որ կապ է ունեցել Սեբեոսի հիշատակած Դ/Գրովանդականի բերդի հետ[56]: Դատելով պատմիչի տվյալներից՝ կարող ենք եզրակացնել, որ այս բերդը եղել է նաև բանտ, ուստի ամենևին բացառված չէ, որ Նատո Դրովանդականը, լինելով բանտային պաշտոնյա, նույնպես ներկայացրել է դատահրավական համակարգը:

Պատվիրակության բարձրաստիճան կազմը և լիազորությունները թույլ են տալիս եզրակացնել, որ նրանք ամենևին էլ չէին եկել Հայաստան միայն Հիզտբուզիտի դատավարությունը անցկացնելու: Այս մասին ուղղակի նշվում է նաև վկայաբանության մեջ. «*Որք եկեալ ի Հայս* ***բազում ուղղութիւնս*** *արարին*»[57]: Ըստ ամենայնի, նման «ուղղություններից» է եղել նաև Դվինի ժողովի վերաբերյալ քննարկումների ծավալումը, ինչը մեծ կարևորություն է ունեցել պարսից տերության համար:

Գաղտնիք չէ, որ Խոսրով Ի-ը ձգտում էր իր վերահսկողությունը սահմանել պարսից տերության քրիստոնեական համայնքների նկատմամբ: Նրա անմիջական ազդեցությամբ է ընթացել Իրանի քրիստոնյաների կաթողիկոսի ընտրությունը 552 թ., որտեղ նա նույնիսկ առաջադրել էր իր բժշկի թեկնածությու-

---

[55] **Ներսէս Ռաժիկ** 2004, 463:
[56] **Սեբէոս** 2005, 476–477:
[57] **Սեբէոս** 2005, 476–477:

նը[58]: Ըստ որոշ աղբյուրների՝ այս արքան դրական վերաբերմունք է ունեցել քրիստոնեական եկեղեցու նկատմամբ[59]: Սեբեոսը, ոգևորված նման տեղեկություններից, նույնիսկ նշել է, թե պարսից արքան կյանքի վերջին տարիներին քրիստոնեություն է ընդունել[60]: Բնականաբար, քրիստոնյաների նկատմամբ մեղմ վերաբերմունքը ունեցել է քաղաքական նպատակներ[61]: Հարկ եղած դեպքում Խոսրով Անուշիրվանը չի հապաղել՝ պատժելու քրիստոնյաներին: Այս մասին խոսում են այն փաստերը, որ Բյուզանդիայի դեմ պատերազմների, ինչպես նաև հակակառավարական ապստամբություններին աջակցելու ժամանակ քրիստոնյաները ենթարկվել են հաշվեհարդարի ու բռնությունների[62]:

Եկեղեցական ժողովներում Խոսրով Անուշիրվանի ուղղակի ներգրավվածության մասին է վկայել է Կ. Պոլսի Փոտ պատրիարքը (IX դ.) Հայոց կաթողիկոս Զաքարիա Ա Ձագեցուն (855–877 թթ.) գրած իր նամակում: Ըստ պատրիարքի՝ հայերը քաղկեդոնականությունից հեռացել են Խոսրով Անուշիրվանի ցանկությամբ և պահանջով: Պարսից արքան այնքան գոհ է եղել հայոց եկեղեցու դիրքորոշումից, որ նույնիսկ իր որդու խնամքը հանձնել է Հայոց կաթողիկոսին: Միևնույն ժամանակ Հայաստանի հարկահանության գործը նույնպես վստահվել է վերջինիս. «*Մի բնութիւն աւանդեցին Քրիստոսի աստուածութեանն եւ մարդկութեանն եւ զԽաչեցարդ եդին յերիս սրբասացութիւնսն հակառակ կարծելով Ժողովոյն Քաղկեդոնի եւ հնգից հայրապետացն. Եւ ի Յունաց նզովիւք չափ ի զատ կացին ի հաղորդութենէ: Ընդ որս եղեւ Պարսից թագաւորն, ընդ որոշելն Հայոց ի ձեռնադրութենէն Հոռոմոց. Եւ* ***գովեալ զՆերսէս*** *եւ զյառաջ խոստացեալ դաշինսն կատարեաց* ***զորդին տալով նմա յորդեգիրս*** *եւ զՀայաստան աշխարհի* ***զհարկսն*** *ի նա հաւատաց եւ յեպիսկոպոսունսն հաւանեալս ընդ նմա*»[63]:

Հավանաբար, Փոտ պատրիարքը այս տեղեկությունները ձեռք է բերել հայ քաղկեդոնականների կողմից գրված որևէ երկից, որը նրան կարող էին տրամադրել նաև ազգությամբ հայ հոգևորականները[64]:

Պատրիարքի նամակն ինքնին ունեցել է կրոնական, դավանաբանական բովանդակություն[65], ինչը ամենևին չի ստվերում Խոսրով Անուշիրվանի միջա-

---

[58] **Zoubery** 2017, 128.
[59] Ասորական աղբյուրներ 1976, 440:
[60] **Սեբէոս** 2005, 472:
[61] **Мишин** 2014, 447–464.
[62] **Мишин** 2014, 452–453, 459–460.
[63] Թուղթ Փոտայ պատրիարքի առ Զաքարիա կաթողիկոս Հայոց Մեծաց 1968, 69–70:
[64] **Անանեան** 1992, 27:

մտության մասին տեղեկությունները և եղած փաստերը, հետևաբար, համապատասխանում են իրականությանը:

Արսեն Սափարացին ևս հստակ տեղեկություններ է փոխանցել այն մասին, որ հենց պարսից արքունիքի հարկադրանքով է տեղի ունեցել Դվինի Բ ժողովը[66]: Համաձայն այս պատմագրի տվյալների՝ Հայոց կաթողիկոս Ներսես «Միջին»-ը պարսից Պերոզ արքայի (459–484 թթ.) հարկադրանքով ժողով է գումարել Դվինում և ընդունել է հակոբիկյան դավանանքը՝ դադարեցնելով եպիսկոպոսներին Կեսարիա՝ ձեռնադրության ուղարկելը. «*Իսկ թագավորը (Պերոզ – **Շ.Ա.**) նորից այլ նենգության դիմեց և հայտնեց իր վճիռը [հայերին] հույներից բաժանելու մասին և՝ վերադարձնելով դեսպաններին՝ [առաջարկեց] անել երկուսից մեկը. «Կամ ընտրեցեք ասորական բոլոր կրոններից որևէ մեկը, բացի մելքիտներինը, որոնք կրոնով հույն են, կամ թողեք ձեր երկիրը և հեռացեք մեզանից»:*

Եվ ժողով գումարեցին քաղաք Դվինում, ուր և ընդունեցին «Խաչեցարը»… և այսու հեռացան ուղիղ և ճշմարիտ դավանությունից և օտարացան սուրբ և մեծ առաքելական կաթողիկե եկեղեցուց:

Հայքն հրաման ստացավ պարսից թագավորից, որ իրենց եպիսկոպոսները իրենք ձեռնադրեն»[67]:

Արսեն Սափարացու հիշատակությունից տեսնում ենք, որ խոսքը կաթողիկոս Ներսես Բ-ի՝ Դվինի Բ ժողովը կազմակերպողի մասին է, մինչդեռ նշվում է, որ պարսից արքան եղել է Պերոզը, ինչը ակնհայտ շփոթմունքի արդյունք է: Հայտնի փաստ է, որ Դվինի Բ ժողովի ընթացքում Սասանյան Իրանում թագավորել է Խոսրով Անուշիրվանը, և, բնականաբար, խոսքը վերաբերել է հենց նրան: Վերջինս բյուզանդացիների դեմ երկարատև պատերազմի (541–557 թթ.)[68] պայմաններում տարբեր քայլերով փորձել է խաթարել հայ-բյուզանդական հարաբերությունները և վերահսկել Հայաստանի ներքին կյանքը:

Ահա այս համատեքստում կարող ենք եզրակացնել, թե ինչու էին Հայաստան եկել և ինչ մտադրություններ ունեին Խոսրով արքայի պատվիրակները: Նրանց գլխավոր առաքելությունը ոչ միայն Հիզտբուզիտին մահապատժի ենթարկելն էր, այլև Դվինի Բ ժողովի աշխատանքներին մասնակցելը: Նրանց

---

[65] **Անանեան** 1992, 18–22:
[66] **Garsoian** 1985, 237.
[67] **Մելիքսեթ-Բեկ** 2013, 35–37:
[68] **Daryaee** 2009, 31.

գործողությունները միտված էին Հայաստանում պարսից տերության դիրքերի ամրապնդմանը և հակաքաղկեդոնական տրամադրությունների խորացմանը:

Սասանյան Իրանի դատաիրավական համակարգը ըստ վկայաբանության

Հիզտբուզիտի վկայաբանությունը արժեքավոր տեղեկություններ է հաղորդել Սասանյան Իրանի **դատական համակարգի** մասին: Կարող ենք կարծել, որ հավատուրացների դատավարությունը Սասանյան տերության համար ունեցել է կարևոր նշանակություն, քանի որ անմիջապես վերաբերել է պարսից կրոնի ամրությանը և ճշմարտացիությանը: Բարձրաստիճան մոգի հավատափոխության օրինակը վտանգավոր կարող էր լինել շարքային հավատացյալների համար: Անհրաժեշտ էին դատական արտակարգ միջոցառումներ:

Ըստ վկայաբանության տվյալների՝ Հիզտբուզիտի գործը քննող մարզպանները եղել են աշխարհիկ դատավորներ, սակայն իրավունք չեն ունեցել մահապատիժ կիրառել մոգերի նկատմամբ: Նրանք կարող էին միայն բանտարկել կամ կտտանքների ենթարկել նման անձանց. «*Եւ ածեալ զնա առաջի՝ ասէ* ***դատաւորն*** *(Նիխորականը – **Շ.Ա.**) Ա՜յ թշուառական, ընդէ՞ր զհայրենի մոգութիւնս թողուս, եւ յիմար եւ ուխտակորոյս լինիս:*

Եւ զայրացեալ իշխանն՝ հրամայեաց հարկանել զերանելին երկոտասան կոկին»)[69]: Կարող ենք ենթադրել նաև, որ դատական նիստերը անցկացվել են առանձին դատարանում («**ատեան**»). «*Եւ նստեալ (Նախապետը – **Շ.Ա.**)* ***յատենի՝*** *ածին զերանելին Մախոշ առաջի նորա*»[70]:

Վկայաբանությունից հայտնի է դառնում նաև, որ դատավոր-մարզպաններին օգնել են **ատենադպիրները**: Կարող ենք կարծել, որ այս պաշտոնյաները, ի տարբերություն սովորական դպիրների, որոնք զբաղվել են տարբեր փաստաթղթեր կազմելով և փոխանցելով[71], օժտված են եղել նաև հարցաքննություններ անցկացնելու և նույնիսկ պատիժներ կիրառելու լիազորություններով: Այս հանգամանքը պարզորոշ տեսնում ենք հետևյալ դրվագից. «***Դպիր*** *ոմն սորա երթեալ ի բանտն՝ հնարէր պատրել զերանելին. ասէ ցնա. Քեզ միայն Արեաց աշխարհն չեղեւ բաւական, զի մոլորեալ ես ի մոգութենէ, անձամբ զքեզ գերի վարելով առ հասարակ յաշխարհէ եւ ի դենէ մոլորեալ:*

---

[69] **Ներսէս Ռաժիկ** 2004, 462:
[70] **Ներսէս Ռաժիկ** 2004, 462:
[71] **Daryaee** 2009, 33.

*Եւ լուեալ զայս **ատենադպրին**՝ յոտն յարեաւ ցասմամբ, եւ սկսաւ հարկանել զնա բրով անողորմ»*[72]:

Ըստ վկայաբանության տվյալների՝ դատական համակարգի մասն են կազմել նաև **դահճապետերը**, որոնք ի կատար են ածել մահապատիժները. «*Եւ ի վաղիւն եկեալ հաւատարիմքն երթեալ ի բանտն ածել զսուրբսն. եւ եկեալ **դահճապետն** ի բանտն՝ տանել, եւ նա հրաժարեալ յեղբարցն գնայր»*[73]:

Մոգերի առաջնորդ համարկարը չի ունեցել դատական իշխանություն և առհասարակ ներգրավված չի եղել դատական գործընթացում, չնայած Սասանյան Իրանում գործել են նաև հոգևոր դատարաններ[74]: Կարող ենք ենթադրել, որ Խոսրով Անուշիրվանը ծայրամասային երկրամասերում կիրառել է հավասարակշռման քաղաքականություն՝ համարկարի իշխանությունը սահմանափակելով մարզպանների դատական իշխանությամբ:

Վկայաբանության տվյալների համաձայն՝ մահապատժի վճիռ կարող էին ընդունել միայն արքայի լիազորած պատվիրակները. այս դեպքում նման որոշում է ընդունել է մոգպետ Պերոզը. «*Եւ յաւուր միում **հրապարակաժողով** արարեալ՝ նստէին յատենի յաղագս հրամանին արքունի:*

Ի նմին ժամու արք ամպարիշտք զգացուցին իշխանացն եւ ասեն. են արք երեք ի բանտի, որոց զմեր պաշտաւնն թողեալ եւ զքրիստոնեութիւն են յանձն առեալ, Ներսէս ոմն Ռաժիկ, եւ Սահակ ոմն յԱտրպատականէ, եւ Յիզդբուզիտ Պարսիկ:

*Եւ զատուցեալ զնոսա՝ ասէ (մոգպետ Պերոզը – **Շ.Ա.**) ցՅիզդիբուզիտ. Ա՛յ թշուառական, ընդէ՞ր զլուսաւոր դենն թողեր եւ նսեմաւոր քրիստոնեութան հաւատացեր, եւ դարձեալ ստիպելով զոհեալ քո հրոյ»*[75]:

Այսպիսով, կարող ենք ասել՝ դատական նիստը կրել է հանդիսավոր բնույթ. անցկացվել է հրապարակաժողովում, որտեղ ներկա են եղել Խոսրով Անուշիրվանի երեք պատվիրակները, մահապարտներն ու բազմությունը:

Այս դատավարության ընթացքում տեսնում ենք, որ Սասանյան օրենքները հստակ տարբերություններ են դրել քրիստոնեություն ընդունած հպատակների միջև: Մանկուց քրիստոնեության հետևողները մահապատժի չեն ենթարկվել. «*Ասէ մոգպետն ցՆերսէս. Ընդէ՞ր եղեր քրիստոնեայ: Ասէ երանելին. Մայր իմ քրիստոնեայ էր, եւ **ի տղայութեանն** էի հաւատացեալ ի Քրիստոս, չգիտեմ*

[72] **Ներսէս Ռաժիկ** 2004, 462–463:
[73] **Ներսէս Ռաժիկ** 2004, 464:
[74] **Периханян** 1983, 266–267.
[75] **Ներսէս Ռաժիկ** 2004, 463:

բնաւ զձեր դենդ: Հարցեալ եւ ընդ Սահակ. Եւ նա ասէ. ***Ի տղայութեանն*** *լեալ էի քրիստոնեայ»*[76]: Նման դրվագի հանդիպում ենք նաև Եվստաթիոսի վկայաբանության մեջ, երբ այս վկայի ընկերակիցներից Ստեփանը նույնպես փրկվել է մահապատժից, քանի որ մանկուց եղել է քրիստոնյա և մեծացել քրիստոնյաների ընտանիքում. «*Եվ վեր կացան ասորիների գլխավորները և Ստեփանի մասին ասացին. «Մենք գիտենք այս մարդուն՝ մեր գյուղից է, իր հայրը, մայրը, եղբայրները և քույրերը քրիստոնյա են և* ***ինքն էլ է քրիստոնյա****»: Եվ Ստեփանին նրանց բառերի համաձայն ազատեցին»*[77]:

Չնայած նման ուշագրավ վկայություններին՝ դժվար է պնդել, որ Ներսես Ռաժիկն ու Սահակ Ատրպատականացին անմիջապես ազատ են արձակվել, քանի որ «Սասանյան դատաստանագիրք»-ը այս դեպքում ազատություն չի նախատեսել մեղադրյալների համար. «*Մարդը, ում ազատազրկման պատճառները հայտնի են, սակայն դատավորը նրան հարցաքննում է այլ գործի շրջանակներում և պարզում, որ նա անմեղ է, միևնույնն է, իրավակարգից ելնելով՝ չի կարող ազատել բանտից»*[78]:

Այս ամենից կարող ենք հետևություն անել, որ V դ. և ընդհուպ մինչև Խոսրով Անուշիրվանի կառավարման առաջին տասնամյակը[79] պարսից արքունիքը զգուշացել է խիստ օրենքներ ընդունելուց ընդդեմ դավանափոխ մոգերի, ինչը կարող էր վտանգավոր հետևանքներ ունենալ: Հիզտբուզիտի վկայաբանության տվյալներից կարող ենք եզրակացնել, որ զգալով հավատափոխության սպառնալիքները՝ հետագայում սահմանվել են խիստ պատիժներ: Նմանատիպ պատիժներից էր նաև «մահացու մեղքի» օրենքը: Ըստ այս օրենքի՝ բոլոր այն զրադաշտականները, որոնք հրաժարվել են մասնակցելուց կրոնական ծեսերի, ենթարկվել են խիստ պատիժների՝ ընդհուպ մահվան[80]: Հայտնի է, որ Հիզտբուզիտը նույնպես հրաժարվել է մասնակցել զրադաշտական տոնակատարության, ուստի չենք կարող բացառել, որ նրա նկատմամբ կիրառված մահապատիժը եղել է հենց այս օրենքի շրջանակներում:

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև քրիստոնեություն ընդունած պարսիկներին պատժելու ձևերը: Հավատուրաց Հիզտբուզիտի **մազերն** ու **մորուքը** կտրել են, որովհետև դրանք համարվել են զրադաշտական

---

[76] **Ներսէս Ռաժիկ** 2004, 463:
[77] წმ. ევსტათის მარტვილობა 2008, 252.
[78] **Периханян** 1973, 349.
[79] **Мишин** 2014, 458–459.
[80] **Периханян** 1983, 258–259.

հավատացյալի կերպարի կարևոր բաղկացուցիչներ. «*Եւ զայրացեալ իշխանն՝ հրամայեաց հարկանել զերանելին երկոտասան կրկին, եւ կտրեալ զմաւրուսն եւ զիերս*», «*հարկանէին զգլուխ երանելւոյն եւ* ***զմաւրուսն խլեալ արմատաքի***»[81]: «Սասանյան դատաստանագիրք»-ը նույնիսկ հատուկ տուգանք էր սահմանել դրանք կտրողների համար[82]: Այսպիսի դրվագներ կարող ենք տեսնել նաև Եվստաթիոսի վկայաբանության մեջ. «*Սափրեք դրանց (Եվստաթիոսի ու ընկերների – Շ.Ա.)* ***գլուխն ու մորուքը*** *և ծակեք դրանց քթերը*»[83]: Նման պատիժները տարածված են եղել ոչ միայն Եվստաթիոսի և Հիզտբուզիտի ժամանակներում: Այսպիսի տույժերի մասին տեղեկություն պահպանվել է նաև Դավիթ Դվնեցու վկայաբանության մեջ. «*խոշտանգել պէսպէս կտրտանաւք և հարուածովք, և քարշմամբք* ***փեսրել զիերսն*** *և* ***զմաւրուսն*** *առ ի հրապուրել զնա ի դեն մոլորութեան իւրեանց*»[84]:

Քանի որ վկայաբանություններում նշվող պատժաձևերի մասին հիշատակություններ կարելի է գտնել նաև Սասանյան օրենսգրքերում, կարող ենք եզրակացնել, որ դրանք միանգամայն իրական են: Փաստորեն, դենակորույս մոգերի նկատմամբ կիրառվել են հատուկ պատժաձևեր, որոնք մեծ անպատվություն են համարվել զրադաշտականների համար:

Եզրակացություն

Հիզտբուզիտի վկայաբանության մեջ ավանդված պատմական տեղեկությունները կարևոր ու բազմաբովանդակ փաստեր են հաղորդել Մարզպանական Հայաստանի և առհասարակ Սասանյան տերության մասին: Վկայաբանության մեջ ուշագրավ տվյալներ են պահպանվել Հայաստանի վարչական բաժանումների, քաղաքական ու տնտեսական կյանքի մասին: Մեծարժեք են այն վկայությունները, որոնք վերաբերում են հասարակական կյանքին, հատկապես վաղմիջնադարյան դավանաբանական ու կրոնական իրականությունը պայմանավորող Դվինի Բ ժողովին: Առավել մանրամասն տեղեկություններ են պահպանվել Հայաստանում հաստատված իրանական վարչակարգի վերաբերյալ՝ ճշգրտումներ մտցնելով կառավարիչ-մարզպանների, հազարապետների, համարկարների, մոգպետների կառավարման տարեթվերի, անվանումների, ինչպես նաև հաստատված բարդ հարաբերությունների հարցում: Վկայաբանությունը բազմաթիվ կարևոր հիշատակություններ է պարունակում Սասանյան Իրանի դատական համակարգի, քաղաքական

[81] **Периханян** 1983, 462, 463.
[82] **Периханян** 1973, 353.
[83] წმ. ევსტათის მარტვილობა 2008, 246.
[84] Վկայաբանութիւն սրբոյն Դաւթի 1944, 128:

ու կրոնական վերնախավի, Հայաստանի հետ դրանց ունեցած հարաբերություններ-ի, ինչպես նաև զրադաշտական կրոնի մասին:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ակինեան Ն. 1910, Կիւրիոն կաթողիկոս Վրաց, Վիեննա, Մխիթարեան տպ., ԻԷ+315:

Աճառյան Հ. 1977, Հայերեն արմատական բառարան, հ. Գ, Երևան, ԵՊՀ հրատ., 645 էջ:

Անանեան Պ. 1992, Զաքարիա Հայոց Կաթողիկոսի եւ Աշոտ իշխանաց իշխանի թղթակցութիւնը Փոտ պատրիարքի եւ Նիկողայոս Ա. Պապի հետ, Վենետիկ, տպ. Ս. Ղազար, 105 էջ:

Անանեան Պ. 1957, Պատմական յիշատակարան մը Դուինի Բ. ժողովքի մասին, Բազմավէպ, թիվ 5–6, տպ. Ս. Ղազար, 296 էջ:

Անանեան Պ. 1991, Քննութիւն հայ եկեղեցու պատմութեան Ե եւ Զ դարերու շրջանին, Վենետիկ, տպ. Ս. Ղազար, 130 էջ:

Ասորական աղբյուրներ 1976, հ. Ա, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Մելքոնյան Հ., Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 8, Երևան, ԳԱ հրատ., 478 էջ:

Բաբգէն կաթողիկոս Ոթմսեցի 2004, [Ա] թուղթ Հայոց ի Պարսս, առ ուղղափառս, «Մատենագիրք Հայոց», հ. Գ, Անթիլիաս-Լիբանան, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 561 էջ:

Բաբգէն կաթողիկոս Ոթմսեցի 2004, Բ թուղթ Հայոց ի Պարսս, առ ուղղափառս, «Մատենագիրք Հայոց», հ. Գ, Անթիլիաս-Լիբանան, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 561 էջ:

Բադալյան Հ. 1976, Հայոց տոմարի պատմություն, Երևան, ԳԱ հրատ., 153 էջ:

Բադալյան Հ. 1970, Օրացույցի պատմություն, Երևան, ԳԱ հրատ., 562 էջ:

Բարթիկյան Հ. 2002, "Narratio de rebus Armeniae", հունարեն թարգմանությամբ մեզ հասած մի հայ-քաղկեդոնական սկզբնաղբյուր, Հայ-բյուզանդական հետազոտություններ, հ. I, Երևան, ԵՊՀ հրատ., 822 էջ:

Թուղթ Փոտայ պատրիարքի առ Զաքարիա կաթողիկոս Հայոց Մեծաց 1968, Հանդէս ամսօրեայ, թիվ 1–2, Մխիթարեան տպ., էջ 512

Կիրակոս Գանձակեցի 1961, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, ԳԱ հրատ., 426 էջ:

Հարությունյան Բ. 1981, Փայտակարան քաղաքը և նրա տեղադրությունը, Լրաբեր հասարակական գիտությունների, թիվ 12, ԳԱ հրատ., 112 էջ:

Մելիքսեթ-Բեկ Լ. 2013, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Գիրք Ա, Երևան, ԵՊՀ հրատ., 788 էջ:

Մովսէս Խորենացի 2003, Պատմութիւն Հայոց, «Մատենագիրք Հայոց», հ. Բ, Անթիլիաս-Լիբանան, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, էջ 1289–2601:

Յակոբեան Ա. 2011, «Գահնամակ ազատաց եւ տանուտէրանց Հայոց» եւ «Զաւրանամակ», Բազմավէպ, թիվ 3–4, տպ. Ս. Ղազար, 698 էջ:

Յովհաննէս Դրասխանակերտցի 2010, Պատմութիւն Հայոց, «Մատենագիրք Հայոց», հ. ԺԱ, Անթիլիաս-Լիբանան, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 795 էջ:

Ներսէս Ռաժիկ 2004, Վկայաբանութիւն սրբոյն Յիզտիբուզտեայ, «Մատենագիրք Հայոց», հ. Գ, Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս-Լիբանան, 561 էջ:

Սեբէոս 2005, Պատմութիւն, «Մատենագիրք Հայոց», հ. Դ, Անթիլիաս-Լիբանան, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 791 էջ:

Ստեփանոս Տարաւնեցի 2010, Պատմութիւն Տիեզերական, «Մատենագիրք Հայոց», հ. ԺԵ, Անթիլիաս-Լիբանան, ԵՊՀ հրատ., 894 էջ:

Տեր-Դավթյան Ք. 2011, Հայկական սրբախոսություն, Երևան, «Նաիրի» հրատ., 423 էջ:

Տեր-Ղևոնդյան Ա. 2003, Հայոց իշխան տիտղոսի ծագումը և Հայոց տերությունը VII դարում, Հոդվածների ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատ., XV+697 էջ:

Տեր-Ղևոնդյան Ա. 2003, Քուստ-ի Կապկոհ վարչական միավորի վերապրուկները խալիֆայության ժամանակ, Հոդվածների ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատ., էջ XV+697:

Տեր-Մկրտչյան Գ. 1998, Գրիգոր-Մանաճիհր Ռաժիկ, Միհրան տոհմից Հայագիտական ուսումնասիրություններ, Գիրք Բ, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպ., 537 էջ:

Քալանթարյան Ա. 1982, Դվինի 1980 թ. պեղումների հիմնական արդյունքները, Լրաբեր հասարակական գիտությունների, թիվ 12, ԳԱ հրատ., 116 էջ:

Քալանթարյան Ա., Ղաֆադարյան Կ. 1990, Դվինի վաղմիջնադարյան մոնումենտալ ճարտարապետության ժամանակագրության որոշ հարցեր, Պատմա-բանասիրական հանդես, թիվ 1, ԳԱ հրատ., 244 էջ:

აბულაძე ი. 1944. ქართული და სომხური ლიტერატურული ურთიერთობა IX–X სს., თბ., საქ. სსრ მეცნ. აკად. გამ-ბა, გვ. 275

წმ. ევსტათის მარტვილობა 2008, ქართული ჰაგიოგრაფიული ეგლები, თბ., ტ. I, გვ. 187.

Boyce M. 1979, Zoroastrians: Their Religious Beliefs and Practices, London, Boston : Routledge & Kegan Paul, XXI+ 252 p.

Brown P. 1982, Society and the Holy in Late Antiquity, Berkeley and Los Angeles, University of California Press, VII+347 p.

Staat K. 2018, Late Antique Latin Hagiography, Truth and Fiction: Trends in Scholarship, L'Antiquité Classique 87, 744 p.

Garsoian N. 1985, Armenia between Byzantium and the Sasanians, London, Variorum Reprints, VIII+340 p.

Shapira Dan D.Y. 2008, Gleanings on Jews of Greater Iran under the Sasanians (According to the Oldest Armenian and Georgian Texts), Iran and the Caucasus 12, Brill, 173 p.

Daryaee T. 2009, Sasanian Persia: The Rise and Fall of an Empire, London-New York, I.B.Tauris & Co Ltd., 248 p.

Vacca A. 2013, From Kᶜusti Kapkoh to Al-Ǧarbĭ: Sasanian Antecedents, the Sectarian Milieu, and the Creation of an Islamic Frontier in Armĭniya, The University of Michigan, VII +334 p.

Zoubery J. 2017, The Role of Religion in the Foreign Affairs of Sasanian Iran and the Later Roman Empire (330–630 A.D.), Historia i Świat, 6, Instytut Historii i Stosunków Międzynarodowych Uniwersytetu Przyrodniczo-Humanistycznego w Siedlcach, 162 p.

Бибиков М. 1996, Историческая литература Византии, СПб., изд. «Алетейя», с. 315

Дашков С. 2008, Цари царей-Сасаниды, Москва, СМИ-Азия, 356 с.

Мишин Д. 2014, Хосров I Ануширван (531–579), его эпоха и его жизнеописание поучение в истории Мискавейха, Москва, ИВ РАН, 696 с.

Периханян А. 1983, Общество и право Ирана в Парфянский и Сасанидский периоды, Москва, изд. «Наука», 383 с.

Периханян А. 1973, Сасанидский судебник, Ереван, изд. АН Армянской ССР, 609 с.

Хуршудян Э. 2003, Армения и Сасанидский Иран, Алматы, Print-S Publ., 474 с.

Хуршудян Э. 2015, Государственные институты парфянского и сасанидского Ирана, Алматы, изд. «Институт Азиатских исследований», 400 с.

ИСТОРИЧНОСТЬ МАРТИРОЛОГИИ ИЗТБУЗИТА

АЗАТЯН Ш.

Резюме

Ключевые слова: *агиография, Сасанидский Иран, амаркар, марзпанская Армения, зороастризм, иностранные святые, Двин.*

Мартирология Изтбузита – одно из важнейших литературных произведений армянской агиографии, содержащее исторические данные о марзпанской Армении и Сасанидском Иране.

Сохранились памятные данные об административных районах Армении, её политической и экономической жизни. Особую ценность представляют сведения, касающиеся общественной и религиозной жизни раннего средневековья, в частности, сведения о Втором Двинском Соборе (553–555), который оказал огромное влияние на общественную и религиозную жизнь Армении на протяжении всего средневековья.

Наиболее подробные сведения сохранились об иранской административной системе, которые вносят поправку в даты управления азарапетов, марзпанов, амаркаров.

Имеются также важные упоминания о Сасанидском Иране, в частности, сведения о судебной системе, политических и религиозных отношениях с Арменией. Данные же, касающиеся зороастризма, расширяют наши знания об этой религиозной системе и ее обрядах.

Помимо сказанного приводятся сведения о дворянских семьях Сасанидского Ирана, находившихся в тесной связи с марзпанской Арменией и занимавших там высокие посты.

HISTORICAL VALUE OF MARTIROLOGY OF HIZTBUZIT

AZATYAN SH.

Summary

Key words: *Hagiography, Sasanian Iran, Amarkar, Armenia of Marzpanate, Zoroastrianism, Foreign Saints, Dvin.*

Martyrology of Hiztbuzit is an important literary work of Armenian Hagiography that has multidisciplinary historical knowledge about Armenia of the Marzpanate period and the Sasanian Empire.

There are many remarkable data about administrative, economic and political system of Armenia in the Early Middle Ages. Especially important information on the Second Council of Dvin (553–555) that had a great influence on social and religious life of Armenia during the Middle ages. Multiple data have been preserved about the Iranian administration, amending the dates for the governance of the azarapetes, marzpanes and amarkares.

Ample and unique evidence also exists on the number of high-ranking Sasanian tribes in Iranian juridical, political and tax system of the Sasanaian Empire. The data on Zoroastrian religion elucidates its essence in terms of religious rituals. Moreover, the article also dwells upon the noblity of Sasanian Iran that was closely connected with Armenia, occupying leading positions there.